

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում:

►B ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 391/2009 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների համար ընդհանուր կանոնների եւ ստանդարտների մասին

(վերամշակված)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 131, 28. 05.2009թ., էջ 11)

Ուղղված՝

Գ1.

Ուղղում՝ ՊՏ L 074, 22. 03.2010թ., էջ 1 (391/09)

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 391/2009 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների համար ընդհանուր կանոնների եւ չափանիշների մասին

(վերամշակված)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2009 թվականի փետրվարի 3-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) «Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների ու ծովագնացության վարչությունների (4) համապատասխան գործողությունների համար ընդհանուր կանոնների եւ ստանդարտների մասին» Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 22-ի 94/57/ԵՀ հրահանգը մի քանի անգամ ենթարկվել է էական փոփոխությունների: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջվում են լրացուցիչ փոփոխություններ, հրահանգը պետք է վերամշակվի՝ տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով,

2) հաշվի առնելով 94/57/ԵՀ հրահանգի դրույթների բնույթը՝ նպատակահարմար է, որ դրա դրույթները վերամշակվեն Համայնքի երկու իրավական փաստաթղթերում՝ Հրահանգում ու Կանոնակարգում,

3) նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպություններին պետք է հնարավորություն տրվի առաջարկելու իրենց ծառայությունները Համայնքի ամբողջ տարածքում եւ մրցելու միմյանց հետ՝ ապահովելով հավասար անվտանգություն եւ շրջակա միջավայրի պաշտպանություն: Ուստի, Համայնքում պետք է ներմուծվեն եւ կիրառվեն իրենց գործողությունների համար անհրաժեշտ մասնագիտական միանման չափանիշները,

4) Այս նպատակի իրականացմանը պետք է հետամուտ լինել այն միջոցառումների միջոցով, որոնք համահունչ կլինեն Ծովագնացության միջազգային կազմակերպության (ԾՄԿ) աշխատանքին եւ, հարկ եղած դեպքում, կհիմնվեն դրա վրա եւ կլրացնեն այն:

Բացի դրանից՝ անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է նպաստեն, որ ԾՄԿ-ն մշակի միջազգային կողմից ճանաչված կազմակերպությունների համար,

- 5) կազմակերպությունների ճանաչման նվազագույն չափորոշիչները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով նավերի անվտանգության բարձրացումն ու նավերից աղտոտման կանխարգելումը: Ուստի, 94/57/ԵՀ հրահանգով սահմանված նվազագույն չափորոշիչները պետք է ամրապնդվեն,

- 6) անդամ պետությունների անունից աշխատելու թույլտվություն ստանալու ցանկություն ունեցող կազմակերպություններին նախնական ճանաչում տրամադրելու համար Հանձնաժողովը եւ ճանաչման համար դիմած անդամ պետությունները կարող են սույն Կանոնակարգով սահմանված նվազագույն չափորոշիչներն առավել արդյունավետորեն գնահատել ներդաշնակեցված եւ կենտրոնացված եղանակով,

- 7) ճանաչում պետք է տրամադրվի միայն կազմակերպության կողմից որակի եւ անվտանգության ապահովման հիման վրա: Անհրաժեշտ է ապահովել, որ ճանաչումը մշտապես համապատասխանի տվյալ կազմակերպության փաստացի կարողություններին: Բացի դրանից՝ ճանաչում տրամադրելիս պետք է հաշվի առնվեն ճանաչված կազմակերպությունների իրավական կարգավիճակի եւ վարչակազմակերպական կառուցվածքի միջեւ եղած տարբերությունները, սակայն, շարունակելով ապահովել սույն Կանոնակարգով սահմանված նվազագույն չափորոշիչների միասնական կիրառումն ու Համայնքի կողմից իրականացվող վերահսկման արդյունավետությունը: Անկախ վարչակազմակերպական կառուցվածքից՝ ճանաչում ստացող կազմակերպությունը պետք է ծառայություններ մատուցի ամբողջ աշխարհում, իսկ դրա իրավաբանական անձինք պետք է ենթարկվեն համընդհանուր համապարտ եւ բաժնային պատասխանատվության,

- 8) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որով սահմանվում են Հանձնաժողովին վերապահված կատարման լիազորությունների

իրականացման ընթացակարգերը (5),

9) Հանձնաժողովը, մասնավորապես, պետք է լիազորված լինի փոփոխելու սույն Կանոնակարգը՝ դրան վերաբերող միջազգային կոնվենցիաներում, արձանագրություններում, կանոնադրքերում եւ բանաձեւերում հետագա փոփոխություններ կատարելու, I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչները թարմացնելու եւ կանոնների ու ընթացակարգերի, ինչպես նաեւ ճանաչված կազմակերպությունների՝ իրենց կողմից դասակարգված նավերի անվտանգության ապահովմանն ու դրանցից աղտոտումը կանխարգելելուն ուղղված գործողությունների արդյունավետությունը չափելու չափորոշիչներ ընդունելու նպատակով: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու, այդ թվում՝ այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն,

10) չափազանց կարեւոր է, որ ճանաչված կազմակերպության կողմից իր պարտավորությունները չկատարելը կարգավորվի արագ, արդյունավետ եւ համաչափ եղանակով: Առաջնային նպատակը պետք է լինի ցանկացած թերության շտկումը՝ անվտանգությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող ցանկացած հնարավոր վտանգ վաղ փուլում հեռացնելու նպատակով: Ուստի, Հանձնաժողովին պետք է իրավասություններ տրվի՝ անհրաժեշտության դեպքում պահանջելու, որ ճանաչված կազմակերպությունը ձեռնարկի անհրաժեշտ կանխարգելիչ ու ուղղիչ միջոցներ եւ, որպես հարկադրանքի միջոց, նշանակի տուգանքներ ու պարբերական տույժեր: Հանձնաժողովը նշված իրավասությունները պետք է իրականացնի հիմնարար իրավունքներին համապատասխան եւ ապահովի, որ կազմակերպությունը գործընթացի ամբողջ ընթացքում կարողանա ներկայացնել իր տեսակետները,

11) Համայնքային մոտեցման համաձայն՝ այն կազմակերպության ճանաչումը չեղյալ ճանաչելու որոշումը, որը չի կատարում սույն Կանոնակարգով սահմանված իր

պարտավորությունները, ընդունվում է Համայնքի մակարդակով եւ, ուստի, Հանձնաժողովի կողմից կոմիտեի ընթացակարգի հիման վրա, եթե վերոհիշյալ միջոցներն արդյունավետ չեն կամ կազմակերպությունն այլ կերպ լուրջ վտանգ է ներկայացնում անվտանգությանը կամ շրջակա միջավայրին,

- 12) ճանաչված կազմակերպությունների հետագա շարունակական դիտանցումը կարող է առավել արդյունավետորեն կատարվել ներդաշնակեցված եւ կենտրոնացված եղանակով՝ սույն Կանոնակարգին դրանց համապատասխանությունը գնահատելու նպատակով: Ուստի, նպատակահարմար է, որ այդ առաջադրանքը Համայնքի անունից հանձնարարվի Հանձնաժողովին եւ ճանաչում պահանջող անդամ պետությանը,

- 13) որպես ճանաչված կազմակերպությունների գործողությունների դիտանցման մի մաս՝ չափազանց կարելի է, որ նավերը եւ դրանց ֆայլերը, անկախ դրանց կրած դրոշից, հասանելի լինեն Հանձնաժողովի տեսուչներին՝ պարզելու, թե արդյոք ճանաչված կազմակերպությունները համապատասխանում են համապատասխան դասերի բաժանված բոլոր նավերի առումով սույն Կանոնակարգով սահմանված նվազագույն չափորոշիչներին,

- 14) ճանաչված կազմակերպությունների կողմից ստուգվող եւ հավաստագրվող նավերի ապահովության համար անհրաժեշտ է, որ ճանաչված կազմակերպությունները կարողանան արագ բացահայտել ու շտկել իրենց կանոնների, գործընթացների եւ ներքին հսկողության համակարգի թերությունները: Դրան պետք է աջակցի առեւտրային կամ քաղաքական շահ չհետապնդող՝ որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինը, որը կարող է ընդհանուր գործողություն առաջարկել բոլոր ճանաչված կազմակերպությունների բարելավման համար եւ արդյունավետ համագործակցություն ապահովել Հանձնաժողովի հետ,

- 15) ճանաչված կազմակերպության կանոններն ու ընթացակարգերը անվտանգության ուժեղացման եւ պատահարների ու աղտոտման կանխարգելման հիմնական գործոնն են: Ճանաչված կազմակերպություններն իրենց կանոնների ու ընթացակարգերի

ներդաշնակեցմանը հանգեցնող գործընթաց են սկսել: Համայնքի օրենսդրությունը պետք է խթանի եւ աջակցի այդ գործընթացին, քանի որ այն դրական ազդեցություն պետք է ունենա ծովային անվտանգության, ինչպես նաեւ Եվրոպայում նավաշինական արդյունաբերության մրցունակության վրա,

16) առետրային նավերի նախագծման, կառուցման եւ պարբերական տեխնիկական զննման առումով ճանաչված կազմակերպությունների կանոնների ներդաշնակեցումը շարունակական գործընթաց է: Ուստի, սեփական կանոններ ունենալու պարտավորությունը կամ ապացուցված կարողությունը պետք է դիտարկվի ներդաշնակեցման գործընթացի համատեքստում եւ չպետք է խոչընդոտի ճանաչված կազմակերպությունների կամ ճանաչման պոտենցիալ թեկնածուների գործողություններին,

17) ճանաչված կազմակերպությունները պետք է պարտավորված լինեն թարմացնել իրենց տեխնիկական ստանդարտները եւ հետետղականորեն կիրարկել դրանք՝ Համայնքի ներսում անվտանգության կանոնները ներդաշնակեցնելու ու միջազգային կանոնների միասնական կիրառումն ապահովելու նպատակով: Եթե ճանաչված կազմակերպությունների տեխնիկական ստանդարտները նույնական կամ համանման են, համապատասխան դեպքերում պետք է հաշվի առնվեն նյութերի, սարքավորումների եւ բաղադրիչների փոխադարձ ճանաչումը՝ որպես մոդել վերցնելով ամենախիստ պահանջներ ներկայացնող ստանդարտները,

18) յուրաքանչյուր ճանաչված կազմակերպություն սկզբունքորեն պետք է պատասխանատու լինի միայն եւ բացառապես իր կողմից հավաստագրված հատվածների համար, սակայն ճանաչված կազմակերպություններն ու արտադրողները պարտավոր են յուրաքանչյուր առանձին դեպքում հետեւել համաձայնեցված պայմաններին կամ կիրառվող օրենքներին՝ կախված հանգամանքներից,

19) քանի որ շահագրգիռ կողմերի միջեւ թափանցիկությունն ու տեղեկությունների փոխանակումը, ինչպես նաեւ տեղեկությունների մատչելիության հանրային իրավունքը

ծովում պատահարների կանխարգելման հիմնական գործիքներն են, ճանաչված կազմակերպություններն իրենց կողմից դասակարգված նավերին վերաբերող բոլոր պարտադիր տեղեկությունները պետք է ներկայացնեն պետության նավահանգստի հսկողության մարմիններին եւ դրանք մատչելի դարձնեն լայն հասարակությանը,

20) անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներից խուսափելու նպատակով նավերի դասակարգման փոփոխումը կանխելու համար ճանաչված կազմակերպությունները միմյանց միջեւ պետք է փոխանակեն դասակարգը փոխող նավերի պայմաններին վերաբերող բոլոր համապատասխան տեղեկությունները եւ, անհրաժեշտության դեպքում, ներառեն դրոշի պետությանը,

21) ծովում շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ նավաշինության գործարանների, սարքավորումների մատակարարների ու նավի սեփականատերերի, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը չպետք է խոչընդոտի կողմերի միջեւ բնականոն առեւտրային գործարքները եւ պայմանագրով սահմանված ծառայությունները,

22) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1406/2002 կանոնակարգով (ԵՀ) սահմանված՝ Եվրոպական ծովային անվտանգության գործակալությունը (ԵԾԱԳ) պետք է անհրաժեշտ աջակցություն տրամադրի՝ սույն Կանոնակարգի կիրառումն ապահովելու համար,

23) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ միջոցների մշակում, որոնց պետք է հետեւեն Համայնքի ներսում շահագործվող նավերի ստուգումը, տեխնիկական զննումն ու հավաստագրումն իրականացնող ճանաչված կազմակերպությունները, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից, եւ ուստի գործողության ծավալից ելնելով, կարող է ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի

նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար:

24) նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ անդամ պետությունների համար մշակված միջոցները սահմանված են «Նավերի ստուգում եւ տեխնիկական զննում իրականացնող կազմակերպությունների ու ծովագնացության վարչությունների համապատասխան գործողությունների համար ընդհանուր կանոնների ու ստանդարտների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/15/ԵՀ հրահանգով (7),

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Այն կազմակերպությունները, որոնց վերապահված է նավերի ստուգումը, տեխնիկական զննումն ու հավաստագրումը ծովում անվտանգության եւ ծովային աղտոտումը կանխարգելելու վերաբերյալ միջազգային կոնվենցիաներին համապատասխանելու համար, պետք է հետեւեն սույն Կանոնակարգով սահմանված միջոցներին եւ խթանեն ծառայություններ մատուցելու ազատությունը: Սա ներառում է նավամարմինների, սարքավորումների եւ էլեկտրական ու վերահսկիչ հարմարանքների հետ կապված անվտանգության պահանջների մշակում եւ իրականացում միջազգային կոնվենցիաների շրջանակներում:

Հոդված 2

Սույն Կանոնակարգի իմաստով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- ա) նավ՝ նավեր, որոնց վրա տարածվում են միջազգային կոնվենցիաները.
- բ) միջազգային կոնվենցիաներ՝ 1974 թվականի նոյեմբերի 1-ի «Ծովում կյանքի անվտանգության մասին» միջազգային կոնվենցիան (ՍՈԼԱՍ 74) (բացի դրա հավելվածի XI-2 գլխից), 1966 թվականի ապրիլի 5-ի «Բեռնման նշագծերի մասին» միջազգային կոնվենցիան եւ 1973 թվականի նոյեմբերի 2-ի Նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող միջազգային կոնվենցիան, ինչպես նաեւ դրա արձանագրություններն ու

փոփոխությունները եւ բոլոր անդամ պետություններում պարտադիր ուժ ունեցող համապատասխան իրավական ակտերն իրենց թարմացված տարբերակով.

- գ) կազմակերպություն՝ իրավաբանական անձ, դուստր ձեռնարկությունները եւ դրանց վերահսկման տակ գտնվող ցանկացած այլ կառույց, որոնք համատեղ կամ առանձին իրականացնում են սույն Կանոնակարգի գործողության շրջանակներում եղած առաջադրանքները.
- դ) վերահսկում (գ) կետի նպատակներով՝ պայմանագրեր կամ օրենքով, կամ փաստացի սահմանված ցանկացած այլ միջոցներ, որոնք առանձին-առանձին կամ միասին հնարավորություն են տալիս որոշիչ ազդեցություն ունենալ իրավաբանական անձի վրա կամ որոնք այդ անձին հնարավորություն են տալիս իրականացնելու սույն Կանոնակարգի գործողության շրջանակներում եղած առաջադրանքները.
- ե) ճանաչված կազմակերպություն՝ կազմակերպություն, որը ճանաչվել է սույն Կանոնակարգի համաձայն.
- զ) թույլտվություն՝ ակտ, որով անդամ պետությունը թույլտվություն կամ լիազորություն է տալիս ճանաչված կազմակերպությանը.
- է) օրենքով նախատեսված հավաստագիր՝ հավաստագիր, որը տրվել է դրոշի պետության կողմից կամ դրա անունից՝ միջազգային կոնվենցիաների համաձայն.
- ը) կանոններ եւ ընթացակարգեր՝ նավերի նախագծման, կառուցման, սարքավորման, գործարկման եւ տեխնիկական զննման վերաբերյալ ճանաչված կազմակերպության պահանջները
- թ) կարգային հավաստագիր՝ ճանաչված կազմակերպության կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստագրում է նավի պիտանելիությունը որոշակի օգտագործման կամ ծառայության համար՝ տվյալ ճանաչված կազմակերպության կողմից սահմանված եւ հրապարակված կանոնների ու ընթացակարգերի համաձայն.
- ժ) գտնվելու վայր՝ գրանցված գրասենյակի, կենտրոնական վարչական գրասենյակի կամ հիմնական գործունեության վայրը:

Հոդված 3

1. Այն անդամ պետությունները, որոնք ցանկանում են թույլտվություն տրամադրել ցանկացած ոչ ճանաչված կազմակերպության, Հանձնաժողովին ճանաչման դիմում են ներկայացնում, որին ամբողջական տեղեկատվություն է կցված եւ ապացույցներ այն մասին, որ տվյալ կազմակերպությունը համապատասխանում է I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչներին, ինչպես նաեւ 8(4), 9-րդ, 10-րդ եւ 11-րդ հոդվածների դրույթներին համապատասխանելու պահանջի եւ կազմակերպության կողմից դրա իրականացման պարտավորությունը ստանձնելու մասին:
2. Հանձնաժողովը, դիմումը ներկայացնող համապատասխան անդամ պետությունների հետ մեկտեղ, գնահատում է ճանաչման համար դիմած կազմակերպությունները՝ ստուգելու, թե արդյոք այդ կազմակերպությունները բավարարում են 1-ին պարբերության մեջ նշված պահանջները եւ ստանձնում են դրանց համապատասխանելու պարտավորությունը:
3. Հանձնաժողովը, 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, հրաժարվում է ճանաչել այն կազմակերպությունները, որոնք չեն բավարարում 1-ին պարբերությունում նշված պահանջները կամ որոնց գործունեությունը, 14-րդ հոդվածի համաձայն սահմանված չափորոշիչների հիման վրա, լուրջ վտանգ է ներկայացնում անվտանգությանը կամ շրջակա միջավայրին:

Հոդված 4

1. Հանձնաժողովը ճանաչում է տրամադրում 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:
2. Ճանաչում տրամադրվում է միայն այն կազմակերպություններին, որոնք բավարարում են 3-րդ հոդվածում նշված պահանջները:
3. Ճանաչում տրամադրվում է համապատասխան իրավաբանական անձին, որը տվյալ ճանաչված կազմակերպությունը կազմող բոլոր իրավաբանական անձանց մայր կազմակերպությունն է: Ճանաչումը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց վրա, որոնք նպաստում են, որ տվյալ կազմակերպությունն ապահովի իրենց ծառայությունների մատուցումն ամբողջ աշխարհում:

4. Գործելով 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է սահմանափակել ճանաչումը նավերի որոշակի տեսակների, չափերի, երթերի կամ դրանց համակցության առումով՝ տվյալ կազմակերպության արդեն հաստատված կարողությունների ու փորձի համաձայն: Հանձնաժողովը նման դեպքերում նշում է սահմանափակման պատճառները եւ այն պայմանները, որոնց դեպքում սահմանափակումը կհանվի կամ դրա ցուցակը կարող է ընդլայնվել: Սահմանափակումը կարող է վերանայվել ցանկացած ժամանակ:

5. Հանձնաժողովը կազմում եւ պարբերաբար թարմացնում է սույն հոդվածի համաձայն ճանաչված կազմակերպությունների ցուցակը: Այդ ցուցակը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 5

Եթե Հանձնաժողովը կարծում է, որ ճանաչված կազմակերպությունը չի բավարարում I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչները կամ չի կատարում սույն Կանոնակարգի համաձայն ստանձնած իր պարտավորությունները կամ որ ճանաչված կազմակերպության՝ անվտանգության ապահովմանը կամ աղտոտման կանխմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը զգալիորեն նվազել է, սակայն այն լուրջ վտանգ չի ներկայացնում անվտանգությանն ու շրջակա միջավայրին, ապա այն տվյալ ճանաչված կազմակերպությունից պահանջում է սահմանված վերջնաժամկետում ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ եւ ուղղիչ միջոցներ՝ ապահովելու համար լիակատար համապատասխանությունը նշված նվազագույն չափորոշիչներին ու պարտավորություններին եւ, մասնավորապես, վերացնելու անվտանգությանն ու շրջակա միջավայրին սպառնացող ցանկացած հնարավոր վտանգ, կամ այլ կերպ կարգավորել արդյունավետության նվազեցման պատճառները:

Կանխարգելիչ եւ ուղղիչ միջոցները կարող են ընդգրկել միջանկյալ պաշտպանիչ միջոցներ, եթե անմիջական հնարավոր վտանգ է սպառնում անվտանգությանն ու շրջակա միջավայրին:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը, չխոչընդոտելով դրանց անհապաղ իրականացումը, տվյալ ճանաչված կազմակերպությանը թույլտվություն տրամադրած բոլոր անդամ պետություններին նախօրոք տեղեկացնում է, թե ինչ միջոցներ է այն մտադիր ձեռնարկել:

Հոդված 6

▼C1

1. Բացի 5-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցներից՝ Հանձնաժողովը կարող է տուգանքներ նշանակել այն ճանաչված կազմակերպություններին

ա)

- որոնք պարբերաբար խախտում են I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչներին համապատասխանելու կամ 8(4), 9-րդ, 10-րդ եւ 11-րդ հոդվածների համաձայն ստանձնած իրենց պարտավորությունները,

— կամ

- որոնց արդյունավետության նվազեցման արդյունքում

առաջանում են լուրջ թերություններ իրենց կառուցվածքում, համակարգում, ընթացակարգերում կամ ներքին հսկողությունում, կամ

բ) որոնք դիտավորյալ ոչ ճիշտ, ոչ ամբողջական կամ մոլորեցնող տեղեկություններ են տրամադրել Հանձնաժողովին 8(1) հոդվածի համաձայն գնահատում անցկացնելիս կամ որոնք այլ կերպ խոչընդոտել են գնահատումը:

▼B

2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ եթե ճանաչված կազմակերպությունը չի ձեռնարկում Հանձնաժողովի կողմից պահանջվող կանխարգելիչ կամ ուղղիչ միջոց կամ անհիմն ձգձգում է դրա իրականացումը, Հանձնաժողովը կարող է պարբերական տույժեր նշանակել այդ կազմակերպությանը՝ մինչեւ վերջինս լիարժեք իրականացնի պահանջվող գործողությունը:

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված տուգանքներն ու պարբերական տույժերը պետք է լինեն տարիամղիչ եւ համարժեք թե՛ գործի լրջությանը, թե՛ տվյալ ճանաչված կազմակերպության տնտեսական կարողություններին՝ հաշվի առնելով, մասնավորապես, թե որքանով է վտանգվել անվտանգությունն ու շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Նշված տուգանքներն ու պարբերական տույժերը պետք է կիրառվեն միայն այն բանից հետո, երբ ճանաչված կազմակերպությանը եւ համապատասխան անդամ պետություններին հնարավորություն տրվի ներկայացնելու իրենց դիտողությունները:

Նշանակված տուգանքների ու պարբերական տույժերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի ճանաչված կազմակերպության նախորդ երեք ֆինանսական տարիների ընդհանուր միջին շրջանառության 5 տոկոսը սույն Կանոնակարգի գործողության շրջանակներում ընդգրկված գործողությունների առումով:

4. Եվրոպական համայնքների արդարադատության դատարանը անսահմանափակ իրավասություն ունի վերաքննելու այն որոշումները, որոնցով Հանձնաժողովը տուգանք կամ պարբերական տույժ է սահմանել: Այն կարող է հանել, նվազեցնել կամ բարձրացնել նշանակված տուգանքը կամ պարբերական տույժը:

Հոդված 7

1. Հանձնաժողովը չեղյալ է հայտարարում այն կազմակերպության ճանաչումը.

- ա) որի՝ I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչներին համապատասխանելու կամ սույն Կանոնակարգի համաձայն ստանձնած իր պարտավորությունների լուրջ եւ կրկնվող խախտումները լուրջ վտանգ են ներկայացնում անվտանգությանն ու շրջակա միջավայրին.
- բ) որի՝ անվտանգության ապահովմանը եւ աղտոտման կանխմանն ուղղված գործողությունների կրկնվող եւ լուրջ խախտումները լուրջ վտանգ են ներկայացնում անվտանգությանն ու շրջակա միջավայրին.
- գ) որը կանխարգելում կամ պարբերաբար խոչընդոտում է Հանձնաժողովի կողմից անցկացվող գնահատումը.
- դ) որը չի վճարում 6(1) եւ (2) հոդվածում նշված տուգանքները եւ (կամ) պարբերական տույժերը. կամ
- ե) որը փորձում է ֆինանսական օժանդակություն կամ փոխհատուցում ձեռք բերել 6-րդ հոդվածի համաձայն իրեն նշանակված տուգանքների համար:

2. 1-ին պարբերության (ա) եւ (բ) կետերի նպատակներով՝ Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել առկա տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝

- ա) համապատասխան ճանաչված կազմակերպության՝ 8(1) հոդվածի համաձայն անցկացրած իր գնահատման արդյունքները.

- բ) 2009/15/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից ներկայացված հաշվետվությունները.
- գ) պատահարների, այդ թվում՝ ճանաչված կազմակերպությունների կողմից դասակարգված նավերի պատահարների վերլուծությունները.
- դ) 6(1) հոդվածի (ա) կետում նշված թերությունների ցանկացած կրկնություն.
- ե) ճանաչված կազմակերպության կողմից դասակարգված նավատորմի վրա ազդեցության չափը. եւ
- զ) 6(2) հոդվածում նշված միջոցների անարդյունավետությունը:

3. Հանձնաժողովն իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետության պահանջով կարող է, 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, որոշում կայացնել՝ չեղյալ հայտարարել ճանաչումն այն բանից հետո, երբ ճանաչված կազմակերպությանն արդեն տրվել է իր դիտողությունները ներկայացնելու հնարավորությունը:

Հոդված 8

1. Հանձնաժողովը ճանաչման համար համապատասխան դիմում ներկայացրած անդամ պետության հետ պարբերաբար եւ առնվազն երկու տարին մեկ գնահատում է բոլոր ճանաչված կազմակերպությունները՝ ստուգելու, որ դրանք պահպանում են սույն Կանոնակարգով սահմանված պարտավորությունները եւ բավարարում են I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչները: Գնահատումը սահմանափակվում է ճանաչված կազմակերպությունների՝ սույն Կանոնակարգի շրջանակներում ընդգրկված գործողություններով:

2. Գնահատման համար ճանաչված կազմակերպություններ ընտրելիս Հանձնաժողովը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ճանաչված կազմակերպության՝ անվտանգության ապահովմանը եւ աղտոտման կանխմանն ուղղված գործողություններին, պատահարների մասին արձանագրություններին եւ անդամ պետությունների՝ 2009/15/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն ներկայացրած հաշվետվություններին:

3. Գնահատումը կարող է ներառել այցելություններ ճանաչված կազմակերպության տարածքային մասնաճյուղեր, ինչպես նաեւ նավերի պատահական ստուգումներ թե՛

ծառայությունների մատուցման, թե՛ կառուցվածքի առումով՝ ճանաչված կազմակերպության գործունեության աուդիտ անցկացնելու նպատակով: Այս դեպքում Հանձնաժողովը, հարկ եղած դեպքում, տեղեկացնում է այն անդամ պետությանը, որի տարածքում գտնվում է կազմակերպության տարածքային մասնաճյուղը: Հանձնաժողովը գնահատման արդյունքների մասին հաշվետվություն է ներկայացնում անդամ պետություններ:

4. Յուրաքանչյուր ճանաչված կազմակերպություն որակի հսկողության համակարգի ուսումնասիրության արդյունքները պետք է տարեկան կտրվածքով ներկայացնի 12(1) հոդվածում նշված Կոմիտե:

Հոդված 9

1. Ճանաչված կազմակերպությունները պետք է ապահովեն, որ Հանձնաժողովին մատչելի լինեն 8(1) հոդվածում նշված գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները: Պայմանագրային ոչ մի դրույթ չպետք է սահմանափակի նշված տեղեկությունների մատչելիությունը:

2. Նավի սեփականատերերի կամ նավին օրենքով նախատեսված կամ կարգային հավաստագիր տրամադրող օպերատորների հետ պայմանագիր կնքելիս ճանաչված կազմակերպությունները պետք է ապահովեն, որ նշված հավաստագրերը տրամադրվեն միայն այն կողմերին, որոնք, 8(1) հոդվածի նպատակներով, չեն խոչընդոտում Հանձնաժողովի տեսուչների մուտքն այդ նավ:

Հոդված 10

1. Ճանաչված կազմակերպությունները պարբերաբար խորհրդակցում են միմյանց հետ՝ հավասարություն պահպանելու, իրենց կանոններն ու ընթացակարգերը ներդաշնակեցնելու եւ դրանք իրականացնելու նպատակով: Դրանք համագործակցում են միմյանց հետ միջազգային կոնվենցիաների հետեւողական մեկնաբանման հասնելու նպատակով՝ չհակասելով դրոշի պետությունների իրավասություններին: Ճանաչված կազմակերպությունները, համապատասխան դեպքերում, համաձայնության են գալիս տեխնիկական ու ընթացակարգային պայմանների շուրջ, որոնցում դրանք փոխադարձաբար ճանաչում են նյութերի, սարքավորումների եւ հավասար ստանդարտների

վրա հիմնված բաղադրիչների համար տրվող կարգային հավաստագրերը՝ որպես մոդել վերցնելով ամենախիստ պահանջներ ներկայացնող ստանդարտները:

Եթե անվտանգության հետ կապված լուրջ պատճառներից ելնելով հնարավոր չէ հասնել փոխադարձ ճանաչման, ապա ճանաչված կազմակերպությունները պետք է հստակորեն նշեն դրա պատճառները:

Եթե ճանաչված կազմակերպությունը ստուգման միջոցով կամ այլ կերպ համոզվում է, որ նյութերը, սարքավորումների մի մասը կամ որեւէ բաղադրիչ չի համապատասխանում իր հավաստագրին, այն կարող է հրաժարվել այդ նյութը, սարքավորումը կամ բաղադրիչը տեղադրել նավի վրա: Ճանաչված կազմակերպությունն անհապաղ դրա մասին տեղեկացնում է այլ ճանաչված կազմակերպությունների՝ նշելով իր մերժման պատճառները:

Ճանաչված կազմակերպությունները դասակարգման նպատակներով պետք է ճանաչեն, «Ծովային սարքավորումների մասին» Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 20-ի 96/98/ԵՀ հրահանգի (8) համաձայն, անիվի նշան կրող ծովային սարքավորումների հավաստագրերը:

Ճանաչված կազմակերպությունները Հանձնաժողով եւ անդամ պետություններ ներկայացնում են պարբերական հաշվետվություններ՝ ստանդարտների եւ նյութերի, սարքավորումների ու բաղադրիչների համար տրվող հավաստագրերի փոխադարձ ճանաչման հարցում հիմնարար առաջընթացի վերաբերյալ:

2. Հանձնաժողովը մինչեւ 2014 թվականի հունիսի 17-ը Եվրոպական պառլամենտ ու Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում՝ հիմնված անկախ ուսումնասիրության, կանոններն ու ընթացակարգերը ներդաշնակեցնելու հարցում ընդհանուր մակարդակի հասնելու եւ նյութերի, սարքավորումների ու բաղադրիչների համար տրվող հավաստագրերի փոխադարձ ճանաչման վրա:

3. Ճանաչված կազմակերպությունները համագործակցում են այն պետության նավահանգստի վերահսկողության կառավարման մարմինների հետ, որոնցում գտնվում է իրենց կողմից դասակարգված նավը, մասնավորապես, հաշվետվություններում նշված թերություններն ու այլ անհամապատասխանությունները վերացնելու նպատակով:

4. Ճանաչված կազմակերպությունները 2009/15/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված ցանկացած թույլտվություն տրամադրող բոլոր անդամ պետությունների կառավարման մարմիններին եւ Հանձնաժողովին ապահովում են համապատասխան բոլոր

տեղեկություններով իրենց կողմից դասակարգված նավատորմերի, փոխանցումների, փոփոխությունների, ուշացումների եւ դասակարգումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ՝ անկախ այն բանից, թե ինչ դրոշի տակ են նավարկում նավերը:

Փոխանցումների, փոփոխությունների, ուշացումների եւ դասակարգումը չեղյալ ճանաչելու մասին տեղեկությունները, այդ թվում՝ ժամկետանց տեխնիկական զննումների, ժամկետանց առաջարկությունների, դասակարգման պայմանների, նավի շահագործման պայմանների կամ ճանաչված կազմակերպությունների կողմից դասակարգված նավերի շահագործման սահմանափակումների վերաբերյալ բոլոր տեղեկությունները (անկախ այն բանից, թե ինչ դրոշի տակ են նավարկում նավերը) ճանաչված կազմակերպությունների համակարգերում գրանցելուն պես պետք է էլեկտրոնային տարբերակով փոխանցվեն նաեւ ստուգումների վերաբերյալ ընդհանուր տվյալների բազա (որից անդամ պետություններն օգտվում են «Պետության նավահանգստի վերահսկողության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23–ի 2009/16/ԵՀ հրահանգի (9) իրականացման համար) տեղեկություններ հաղորդելու պարտավորություն առաջացնող դեպքից հետո 72 ժամվա ընթացքում: Ոչ ժամկետանց առաջարկությունների եւ դասակարգ տրամադրելու պայմանների մասին տեղեկություններից բացի՝ մնացած տեղեկությունները հրապարակվում են նշված ճանաչված կազմակերպությունների կայքէջում:

5. Ճանաչված կազմակերպությունները, մինչեւ դրոշի պետության կառավարման մարմիններին լիարժեք ստուգում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն ընձեռելը, չեն տրամադրում օրենքով նախատեսված հավաստագրեր այն նավերին (անկախ դրանց կրած դրոշից), որոնք զրկվել են իրենց դասակարգումից կամ անվտանգության նկատառումներով փոխում են իրենց դասակարգումը:

6. Մեկ ճանաչված կազմակերպությունից մյուսը դասակարգման փոխանցման դեպքում դասակարգումը զիջող կազմակերպությունը պետք է առանց անհարկի ուշացման նավը ձեռք բերած կազմակերպությանը ներկայացնի տվյալ նավի վերաբերյալ գործի ամբողջական պատմությունը, մասնավորապես, վերջինիս տեղեկացնի.

ա) ցանկացած ժամկետանց տեխնիկական զննումների.

բ) ցանկացած ժամկետանց առաջարկության եւ դասակարգում տրամադրելու պայմանների.

գ) նավի շահագործման պայմանների եւ

դ) նավի շահագործման սահմանափակումների մասին:

Նավը ձեռք բերած կազմակերպությունը կարող է նոր հավաստագրեր տրամադրել նավին միայն այն բանից հետո, երբ զիջող կազմակերպության կողմից սահմանված բոլոր ժամկետանց տեխնիկական զննումները բավարար չափով անցկացվեն եւ նավի վերաբերյալ արված բոլոր ժամկետանց առաջարկությունները կամ դասակարգում տրամադրելու պայմանները բավարարվեն:

Մինչեւ հավաստագրեր տրամադրելը՝ նավը ձեռք բերած կազմակերպությունը պետք է զիջող կազմակերպության հետ խորհրդակցի հավաստագրերի տրամադրման ամսաթվի վերաբերյալ եւ հաստատի օրը, վայրն ու իրականացված գործողությունը՝ բավարարելու յուրաքանչյուր ժամկետանց տեխնիկական զննում, առաջարկություն ու դասակարգում տրամադրելու պայմանները:

Ճանաչված կազմակերպությունները պետք է սահմանեն եւ իրականացնեն ընդհանուր պահանջներ՝ դասակարգման փոխանցման դեպքերի առումով հատուկ նախազգուշական միջոցների անհրաժեշտության դեպքում: Նշված դեպքերը ներառում են, նվազագույնը, 15 տարվա կամ ավելի հին նավերի դասակարգման փոխանցումը եւ փոխանցումը ոչ ճանաչված կազմակերպությունից ճանաչված կազմակերպություն:

Ճանաչված կազմակերպությունները սույն պարբերության դրույթները պատշաճորեն իրականացնելիս համագործակցում են միմյանց հետ:

Հոդված 11

1. Մինչեւ 2011 թվականի հունիսի 17-ը ճանաչված կազմակերպությունները, որակի միջազգային չափանիշների համաձայն, պետք է կազմավորեն եւ հաստատեն որակի անկախ գնահատումն ու հավաստագրումն իրականացնող մարմին, որին նավագնացության ոլորտում աշխատող համապատասխան մասնագիտական ասոցիացիաները կարող են մասնակցել խորհրդատվական իրավունքով:

2. Որակի անկախ գնահատումն ու հավաստագրումն իրականացնող մարմինը կատարում է հետեւյալ առաջադրանքները.

- ա) ճանաչված կազմակերպությունների որակի հսկողության համակարգերի հաճախակի եւ կանոնավոր ստուգումներ՝ որակի ստանդարտների ISO 9001 չափորոշիչների համաձայն.

- բ) ճանաչված կազմակերպությունների, այդ թվում՝ 3-րդ հոդվածի համաձայն ճանաչման դիմում ներկայացրած կազմակերպությունների, որակի հսկողության համակարգերի հավաստագրում.
- գ) միջազգայնորեն ճանաչված որակի հսկողության ստանդարտների մեկնաբանում, որպեսզի դրանցում հաշվի առնվեն, մասնավորապես, ճանաչված կազմակերպությունների բնույթի եւ պարտավորությունների հատուկ առանձնահատկությունները. եւ
- դ) անհատական եւ կոլեկտիվ առաջարկությունների ընդունում՝ ճանաչված կազմակերպությունների գործընթացներն ու ներքին հսկողության մեխանիզմները բարելավելու նպատակով:

3. Որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինը պետք է ունենա ճանաչված կազմակերպություններից անկախ գործելու անհրաժեշտ իրավասությունները եւ իր պարտականություններն արդյունավետ կերպով ու մասնագիտական ամենաբարձր չափանիշներին համապատասխան կատարելու անհրաժեշտ միջոցները՝ պահպանելով այդ պարտականությունները կատարող անձանց անկախությունը: Որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինը սահմանում է իր աշխատանքային մեթոդներն ու ընթացակարգային կանոնները:

4. Որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինը կարող է դիմել արտաքին որակի գնահատումն իրականացնող այլ մարմինների օգնությանը:

5. Որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինը շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ դրոշի պետություններին ու Հանձնաժողովին ներկայացնում է ամբողջական տեղեկություններ իր աշխատանքների տարեկան պլանի, ինչպես նաեւ իր արդյունքների ու առաջարկությունների, մասնավորապես, այն իրավիճակների վերաբերյալ, որտեղ անվտանգությունը կարող է վտանգվել:

6. Հանձնաժողովը պարբերաբար աջակցում է որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմինին:

7. Հանձնաժողովն անդամ պետություններին զեկուցում է իր կողմից իրականացված գնահատման արդյունքների ու հետեւանքների մասին:

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումները կանխարգելող կոմիտեն (ԱԾԿ), որը հիմնադրվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2099/2002 կանոնակարգով (ԵՀ):

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 3-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը երեք ամիս է:

4. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 13

1. Առանց ընդլայնելու գործողության իր շրջանակները՝ սույն Կանոնակարգը կարող է փոփոխվել, որպեսզի թարմացվեն I հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչները՝ հաշվի առնելով, մասնավորապես, ԾՄԿ համապատասխան որոշումները:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 12(4) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Սույն Կանոնակարգի 2(բ) հոդվածով սահմանված միջազգային կոնվենցիաների փոփոխությունները կարող են հանվել սույն Կանոնակարգի գործողության շրջանակներից՝ թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 14

1. Հանձնաժողովն ընդունում է հրապարակում է.

- ա) կանոնների ու ընթացակարգերի, ինչպես նաեւ ճանաչված կազմակերպությունների՝ անվտանգության ապահովմանն ու աղտոտման կանխմանն ուղղված գործողությունների, իրենց կողմից դասակարգված նավերի կանոնների եւ ընթացակարգերի

արդյունավետությունը չափելու չափորոշիչներ՝ հաշվի առնելով, մասնավորապես, Պետության նավահանգստի վերահսկողության մասին Փարիզի հուշագրով եւ (կամ) նմանատիպ այլ փաստաթղթերով ներկայացված տվյալները. եւ

- բ) նշված գործողությունները անվտանգությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող լուրջ վտանգ համարելու չափորոշիչներ, որոնցում կարող են հաշվի առնվել ավելի փոքր կամ խիստ մասնագիտացված կազմակերպությունների վրա ազդող հատուկ հանգամանքները:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 12(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները, որոնք լրացնում են սույն Կանոնակարգն ու անհրաժեշտ են 6-րդ, եւ, հարկ եղած դեպքում, 7-րդ հոդվածները կիրարկելու համար, պետք է ընդունվեն՝ 12(4) հոդվածում նշված՝ պատշաճորեն իրականացվող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

3. Չխոչընդոտելով 1 հավելվածով սահմանված նվազագույն չափորոշիչների անհապաղ կիրառումը՝ Հանձնաժողովը, 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, կարող է ընդունել դրանց մեկնաբանման վերաբերյալ կանոններ եւ ուսումնասիրել 1 հավելվածի Ա մասի 3-րդ կետում նշված ընդհանուր նվազագույն չափորոշիչների իրականացման նպատակների սահմանումը:

Հոդված 15

1. Այն կազմակերպությունները, որոնք սույն Կանոնակարգի ուժ մեջ մտնելու պահին արդեն ճանաչում են ստացել 94/57/ԵՀ հրահանգի համաձայն, պահպանում են իրենց ճանաչումը՝ 2-րդ պարբերության դրույթների համաձայն:

2. Չհակասելով 5-րդ եւ 7-րդ հոդվածներին՝ Հանձնաժողովը նորից ուսումնասիրում է բոլոր սահմանափակված ճանաչումները, որոնք տրամադրվել են մինչեւ 2010 թվականի հունիսի 17-ը՝ 94/57/ԵՀ հրահանգի համաձայն եւ հաշվի առնելով սույն Կանոնակարգի 4(3) հոդվածը՝ 12(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն որոշելու, թե արդյոք սահմանափակումները պետք է փոխարինվեն կամ հանվեն: Սահմանափակումները պետք է կիրառվեն մինչեւ Հանձնաժողովի որոշում կայացնելը:

Հոդված 16

8(1) հոդվածի համաձայն գնահատում անցկացնելիս Հանձնաժողովը ստուգում է, որ ճանաչում ստացողն այն կազմակերպության համապատասխան իրավաբանական անձն է, որի նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգի դրույթները: Հանձնաժողովը հակառակ դեպքում ճանաչումը փոփոխելու որոշում է կայացնում:

Եթե Հանձնաժողովը փոփոխում է ճանաչումը, անդամ պետություններն իրենց համաձայնագրերը հարմարեցնում են ճանաչված կազմակերպությանը, որպեսզի դրանցում հաշվի առնվի արված փոփոխությունը:

Հոդված 17

Հանձնաժողովը երկամյա ժամկետով Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին տեղեկացնում է սույն Կանոնակարգի կիրառման մասին:

Հոդված 18

Համայնքի եւ ազգային իրավունքի համաձայն 94/57/ԵՀ հրահանգին կատարվող հղումները, հարկ եղած դեպքում, համարվում են սույն Հրահանգին կատարվող հղումներ եւ ընթերցվում են II հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 19

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱԶՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՅՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

(3-րդ հոդվածում նշված)

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Ճանաչված կազմակերպությունը պետք է իրավասուբյեկտություն ունենա այն պետության տարածքում, որտեղ այն գտնվում է: Դրա հաշիվները վավերացվում են անկախ աուդիտորների կողմից:
2. Ճանաչված կազմակերպությունը պետք է հնարավորություն ունենա հարուստ փորձ արձանագրել փաստաթղթերում առետրային նավերի նախագիծը եւ կառուցվածքը գնահատելիս:
3. Ճանաչված կազմակերպությունը պետք է մշտապես ունենա վարչական, տեխնիկական, օժանդակող եւ գիտահետազոտական ուսումնասիրություններ իրականացնող անձնակազմ, որը կհամապատասխանի նավատորմի կատեգորիային, կառուցվածքին եւ կկարողանա աջակցել կազմակերպությանը՝ ներգրավվելու նավերի կառուցման ու վերափոխման գործում: Ճանաչված կազմակերպությունը պետք է հնարավորություն ունենա յուրաքանչյուր աշխատատեղի համար, անհրաժեշտության դեպքում, նշանակել այնպիսի միջոցներ ու անձնակազմ, որոնք կհամապատասխանեն 6-րդ եւ 7-րդ կետերով սահմանված ընդհանուր նվազագույն չափորոշիչների ու Բ մասով սահմանված կոնկրետ նվազագույն չափորոշիչների համաձայն կատարվող/իրականացվող առաջադրանքներին:
4. Ճանաչված կազմակերպությունը պետք է ունենա ու կիրառի առետրային նավերի նախագծման, կառուցման եւ պարբերական տեխնիկական զննման՝ միջազգայնորեն ճանաչված ստանդարտների որակ ունեցող մի շարք սեփական կանոններ ու ընթացակարգեր կամ դրսեւորի նման նավերի նախագծման, կառուցման ու զննման կարողություն: Դրանք պետք է հրապարակվեն եւ շարունակաբար արդիականացվեն ու բարելավվեն գիտահետազոտական եւ զարգացման ծրագրերի միջոցով:
5. Ճանաչված կազմակերպությունը պետք է ունենա տարեկան կտրվածքով հրապարակված կամ հանրությանը մատչելի էլեկտրոնային տվյալների բազայում պահպանված՝ նավերի վերաբերյալ իր գրանցամատյանը:

6. Ճանաչված կազմակերպությունը չպետք է վերահսկվի նավի սեփականատերերի կամ նավաշինարարների կամ առետրային տեսանկյունից նավերի արտադրության, կահավորման, վերանորոգման կամ շահագործման մեջ ներգրավված անձանց կողմից: Ճանաչված կազմակերպությունն իր եկամուտների առումով էական կախում չունի մեկ առետրային ձեռնարկությունից: Ճանաչված կազմակերպությունը չի կատարում կարգային կամ պարտադիր աշխատանք, եթե այն նույնական է կամ առետրային, անձնական, կամ ընտանեկան կապեր ունեցող նավի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ: Նման անհամատեղելիությունը կիրառվում է նաեւ ճանաչված կազմակերպությունում աշխատող փորձագետների նկատմամբ:
7. Ճանաչված կազմակերպությունը պետք է գործի «Ղեկավարության անունից գործող ճանաչված կազմակերպությունների՝ տեխնիկական զննման ու հավաստագրման հետ կապված գործառույթների վերաբերյալ մասնագրերի մասին» ԾՄԿ Ա.789(19) որոշման հավելվածով սահմանված դրույթների համաձայն:

Բ. ԿՈՆԿՐԵՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Ճանաչված կազմակերպությունը պետք է գործունեություն ծավալի ամբողջ աշխարհում իր փորձագետների կամ, բացառիկ եւ պատշաճորեն հիմնավորված դեպքերում, այլ ճանաչված կազմակերպությունների փորձագետների միջոցով:
2. Ճանաչված կազմակերպությունը պետք է հետեւի էթիկայի կանոններին:
3. Ճանաչված կազմակերպությունը պետք է ղեկավարվի եւ կառավարվի այնպես, որ ապահովվի ղեկավարության կողմից պահանջվող տեղեկությունների գաղտնիությունը:
4. Ճանաչված կազմակերպությունը պետք է համապատասխան տեղեկություններ ներկայացնի ղեկավարությանը, Հանձնաժողովին եւ շահագրգիռ կողմերին:
5. Ճանաչված կազմակերպությունը, դրա փորձագետներն ու տեխնիկական անձնակազմը պետք է կատարեն իրենց աշխատանքը՝ ոչ մի կերպ չխախտելով նավաշինության գործարանների, սարքավորումների մատակարարների ու նավի սեփականատերերի մտավոր սեփականության իրավունքը, այդ թվում՝ արտոնագրերը, լիցենզիաները, նոու-հաուն կամ ցանկացած այլ գիտելիք, որի կիրառումն իրավաբանորեն պաշտպանված է միջազգային, Համայնքի կամ ազգային մակարդակով. ոչ մի պարագայում եւ չխոչընդոտելով անդամ պետությունների ու Հանձնաժողովի գնահատման լիազորությունները եւ, մասնավորապես, 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչված

կազմակերպությունը, իր փորձագետները կամ իր կողմից աշխատանքի ընդունված տեխնիկական անձնակազմը չեն կարող ներկայացնել կամ հրապարակել կառուցվող կամ վերանորոգվող նավերի զննման, ստուգման եւ մոնիթորինգի ընթացքում ձեռք բերված համապատասխան տվյալները:

6. Ճանաչված կազմակերպությունը պետք է սահմանի եւ փաստաթղթերով ձեւակերպի որակի ձեռքբերման իր քաղաքականությունը, նպատակներն ու պարտավորությունները եւ ապահովի, որ այդ քաղաքականությունն ընկալվի, իրականացվի եւ պահպանվի ճանաչված կազմակերպության բոլոր մակարդակներում: Ճանաչված կազմակերպության քաղաքականությունը պետք է վերաբերի անվտանգության ապահովմանն ու աղտոտման կանխմանն ուղղված գործողությունների առաջադրանքներին ու ցուցանիշներին:
7. Ճանաչված կազմակերպությունը պետք է ապահովի, որ.
 - ա) իր կանոններն ու ընթացակարգերը սահմանվեն եւ պահպանվեն համակարգված եղանակով.
 - բ) իր կանոններն ու ընթացակարգերը պահպանվեն, եւ կիրառվի ներքին համակարգ՝ այդ կանոնների ու ընթացակարգերի առումով ծառայության որակը չափելու համար.
 - գ) բավարարվեն պարտադիր աշխատանքի պահանջները, որի համար ճանաչված կազմակերպությունը թույլտվություն է ստացել, եւ կիրառվի միջազգային կոնվենցիաների պահպանման առումով ծառայության որակը չափելու ներքին համակարգ.
 - դ) սահմանվեն եւ փաստաթղթերով ձեւակերպվեն այն անձնակազմի պատասխանատվությունները, լիազորություններն ու փոխհարաբերությունը, որի աշխատանքն ազդում է ճանաչված կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների որակի վրա.
 - ե) աշխատանքն ամբողջովին կատարվի վերահսկվող պայմանների ներքո.
 - զ) կիրառվի վերահսկիչ համակարգ, որը մոնիթորինգի կենթարկի փորձագետների եւ ճանաչված կազմակերպության կողմից աշխատանքի ընդունված տեխնիկական ու վարչական անձնակազմի աշխատանքը.
 - է) փորձագետները հարուստ գիտելիքներ ունենան նավի կոնկրետ տեսակի մասին, որի վրա իրենք աշխատում են (այսինքն՝ որոշակի տեխնիկական զննում են անցկացնում), եւ համապատասխան կիրառելի պայմանների մասին.

- ը) կիրառվի փորձագետների որակավորման համակարգ, իսկ նրանց գիտելիքները շարունակաբար թարմացվեն.
- թ) տվյալները պահվեն՝ արձանագրելու մատուցվող ծառայությունների առումով պահանջվող ստանդարտների ապահովումը, ինչպես նաեւ որակի հսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը.
- ժ) ամենուրեք պահպանվի որակի հսկողության եւ պահպանման հետ կապված բոլոր գործողությունների պլանավորված ու փաստաթղթերով ձեւակերպված, ներքին աուդիտ անցկացնելու համապարփակ համակարգ.
- ժա) տեխնիկական զննման եւ հավաստագրման ներդաշնակեցված համակարգով պահանջվող պարտադիր տեխնիկական զննումներն ու ստուգումները, որոնց համար տվյալ ճանաչված կազմակերպությունը թույլտվություն է ստացել, անցկացվեն «Հետազոտության եւ հավաստագրման ներդաշնակեցված համակարգի համաձայն հետազոտություն անցկացնելու ուղեցույցների մասին» ԾՄԿ Ա.948(23) որոշման հավելվածով եւ հավելումով սահմանված դրույթների համաձայն.
- ժբ) ստեղծվի պատասխանատվության եւ վերահսկողության հստակ ու անմիջական կապ՝ ճանաչված կազմակերպության կենտրոնական եւ տարածաշրջանային գրասենյակների ու ճանաչված կազմակերպությունների եւ դրանց փորձագետների միջեւ:
8. Ճանաչված կազմակերպությունը պետք է զարգացնի, ձեւավորի եւ պահպանի որակի ներքին, արդյունավետ համակարգ՝ հիմնված միջազգայնորեն ճանաչված որակի համապատասխան ստանդարտների վրա եւ 11(1) հոդվածում նշված որակի գնահատումը եւ հավաստագրումն իրականացնող մարմնի կողմից մեկնաբանված ու հավաստագրված ԵՆ ԻՍՕ/ՄԷՀ 17020:2004 (ստուգում իրականացնող մարմիններ) եւ ԵՆ ԻՍՕ/ՄԷՀ 9001:2000 (որակի հսկողության մարմիններ, պահանջներ) ստանդարտներին համապատասխան:
9. Ճանաչված կազմակերպության կանոններն ու ընթացակարգերը պետք է իրականացվեն այնպես, որ կազմակերպությունը, առաջնորդվելով իր անմիջական գիտելիքներով եւ դատողությամբ, հնարավորություն ունենա համապատասխան նավերի անվտանգության վերաբերյալ կազմելու հուսալի ու անկողմնակալ հայտարարագիր կարգային հավաստագրերի միջոցով, որոնց հիման վրա կարող են տրամադրվել օրենքով նախատեսված հավաստագրեր:

10. Ճանաչված կազմակերպությունը, մասնագիտական որակավորում ունեցող անձնակազմի միջոցով եւ «Վերահսկվող մարմինների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման մասին» ԾՄԿ Ա.913(22) որոշման հավելվածով սահմանված դրույթների համաձայն, պետք է ունենա հավաստագրում ընդգրկված անհրաժեշտ միջոցները՝ անվտանգության կառավարման համակարգի կիրառումն ու ապահովումը թե՛ ցամաքում, թե՛ նավի վրա գնահատելու համար:
11. Ճանաչված կազմակերպությունը ղեկավարության ներկայացուցիչներին ու այլ շահագրգիռ կողմերի պետք է թույլ տա մասնակցել իր կանոնների ու ընթացակարգերի ձեւավորմանը:

ՀԱՎԵԼ ՎԱԾ II

Համեմատական աղյուսակը

94/57/ԵՀ հրահանգ	2009/15/ԵՀ հրահանգ	Սույն Կանոնակարգը
Հոդված 1	Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2(ա)	Հոդված 2(ա)	Հոդված 2(ա)
Հոդված 2(բ)	Հոդված 2(բ)	—
Հոդված 2(գ)	Հոդված 2(գ)	—
Հոդված 2(դ)	Հոդված 2(դ)	Հոդված 2(բ)
Հոդված 2(ե)	Հոդված 2(ե)	Հոդված 2(գ)
—	Հոդված 2(զ)	Հոդված 2(դ)
Հոդված 2(զ)	Հոդված 2(է)	Հոդված 2(ե)
Հոդված 2(է)	Հոդված 2(ը)	Հոդված 2(զ)
Հոդված 2(ը)	Հոդված 2 (թ)	Հոդված 2(է)
Հոդված 2 (թ)	Հոդված 2 (ժա)	Հոդված 2 (թ)
—	Հոդված 2(ժ)	Հոդված 2(ը)
Հոդված 2(ժ)	Հոդված 2(լ)	—
Հոդված 2 (ժա)	—	Հոդված 2(ժ)
Հոդված 3	Հոդված 3	—
Հոդված 4(1), առաջին արտահայտություն	—	Հոդված 3(1)
Հոդված 4(1), երկրորդ	—	Հոդված 3(2)

արտահայտություն		
Հոդված 4(1), երրորդ արտահայտություն	—	—
Հոդված 4(1), չորրորդ արտահայտություն	—	Հոդված 4(1)
—	—	Հոդված 3(3)
—	—	Հոդված 4(2), (3), (4)
—	—	Հոդված 5
—	—	Հոդված 6
—	—	Հոդված 7
Հոդված 5(1)	Հոդված 4(1)	—
Հոդված 5(3)	Հոդված 4(2)	—
Հոդված 6(1), (2), (3), (4)	Հոդված 5(1), (2), (3), (4)	—
Հոդված 6(5)	—	—
Հոդված 7	Հոդված 6	Հոդված 12
8(1) հոդվածի առաջին պարբերությ	Հոդված 7(1), առաջին ենթապարբերության կետ	—
8(1) հոդվածի, երկրորդ պարբերությ	—	Հոդված 13(1)
8(1) հոդվածի երրորդ պարբերությ	Հոդված 7(1), առաջին ենթապարբերության կետ	—

—	Հոդված 7(1), երկրորդ ենթապարբերություն	Հոդված 13(1), երկրորդ ենթապարբերություն
Հոդված 8(2)	Հոդված 7(2)	—
Հոդված 8(2), երկրորդ ենթապարբերություն	—	Հոդված 13(2)
Հոդված 9(1)	—	—
Հոդված 9(2)	—	—
Հոդված 10(1), ներածական մաս	Հոդված 8	—
Հոդված 10(1)(ա), (բ), (գ), (2), (3), (4)	—	—
Հոդված 11(1), (2)	Հոդված 9(1), (2)	—
Հոդված 11(3), (4)	—	Հոդված 8(1), (2)
Հոդված 12	Հոդված 10	—
Հոդված 13	—	—
Հոդված 14	Հոդված 11(1), (2)	—
—	Հոդված 11(3)	—
—	Հոդված 12	—
—		Հոդված 9
Հոդված 15(1)		
		Հոդված 10(1), (2)
Հոդված 15(2)		Հոդված 10(3)
Հոդված 15(3)	—	Հոդված 10(4)

Հոդված 15(4)		Հոդված 10(5)
Հոդված 15(5)		Հոդված 10(6) առաջին, երկրորդ, երրորդ եւ հինգերորդ ենթապարբերություններ
—		Հոդված 10(6), չորրորդ ենթապարբերություն
Հոդված 16	Հոդված 13	—
Հոդված 17	Հոդված 16	—
—	Հոդված 14	—
—	Հոդված 15	—
		Հոդված 11
		Հոդված 14
		Հոդված 15
		Հոդված 16
		Հոդված 17
		Հոդված 18
		Հոդված 19
Հավելված		Հավելված I
	Հավելված I	
	Հավելված II	Հավելված II

(2) ՊՏ C 229, 22.09.2006թ., էջ 38:

(3) Եվրոպական պառլամենտի 2007 թվականի ապրիլի 25-ի եզրակացություն (ՊՏ C 74 E, 20.03.2008թ., էջ 632), Խորհրդի 2008 թվականի հունիսի 6-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 190 E, 29.07.2008թ., էջ 1), Եվրոպական պառլամենտի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված), Խորհրդի 2009 թվականի փետրվարի 26-ի որոշում եւ Եվրոպական պառլամենտի 2009 թվականի մարտի 11-ի օրենսդրական որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված):

(4) ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 20:

(5) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

(6) ՊՏ L 208, 05.08.2002թ., էջ 1:

(7) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 47-րդ էջը:

(8) ՊՏ L 46, 17.02.1997թ., էջ 25:

(9) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 57-րդ էջը:

(10) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1: